ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **28/04/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Աղաջանյանը, Հայկ Հակոբյանը, Արմենակ Միրզախանյանը, Սուրեն Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գարիկ Հակոբյանը, Արմինե Հարությունյանը, Օսաննա Մարկոսյանը, Լիլիթ Հարությունյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Աննա Կարապետյանը

Համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանը տեղեկացրեց, որ օրակարգում ընդգրկված 3-րդ հարցը «3. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» անհրաժեշտ է ուժգնացնել, քանի որ Դրոշմանիշային վճարների մասին օրենքում տեղի է ունեցել փոփոխություններ, հարցը վերանայման կարիք ունի, առաջարկեց օրակարգից հանել և ներկայացնել ավագանու մյուս նիստին:
Քվեարկության դրվեց.

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Քվեարկությանը չմասնակցեց ավագանու անդամ Աննա Ավետիսյանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Արտահայտվեց ավագանու անդամ Աննա Ավետիսյանը.
Քննարկմանը ներկայացված նախագծերը շարունակությունն են նախորդ նիստում կայացված որոշման, ըստ որի դադարեցվում է Սիսիանի և Գորայքի համայնքապետարանների գործունեությունը և հիմնադրվում է «Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ: Որոշմամբ սահմանվել է որ նշված հիմնարկների գործունեությունը դադարեցվում է մայիսի 2-ին, տվյալ որոշման մեջ չի մատնանշվել 18-րդ հոդվածի համապատասխան կետը:
Աննա Կարապետյանը ներկայացրեց, որ 2022թ. սեպտեմբերի 25-ից հետո ՏԻՄ օրենքի 102-րդ հոդվածի դրույթների համաձայն համայնքը համարվել է խոշորացված, միավորված և վերակազմակերպված: Խնդրեց գրավոր ներկայացնել առաջարկությունները:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 499600 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է ՀՀ ԱԺ պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 71.04 տոկոսի սահմաններում: Որոշման նախագծով համայնքի ղեկավարի վարձատրության չափը կազմում է ՀՀ ԱԺ պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 60%-ը: Տարեկան կտրվածքով նախորդ տարվա համեմատ կավելանա 15%-ի չափով:
Ջիվան Մարգարյանը հարցրեց ինչքա՞ն է ավելացել աշխատակիցների աշխատավարձը և որ պաշտոնները:
Աննա Կարապետյանը պատասխանեց, որ վարչական ղեկավարներից բացի, բոլորինը 15%-ի չափով:
Դրվեց քվեարկության.

Կողմ-10 Դեմ-6 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Քվեարկությանը չմասնակցեց ավագանու անդամ Աննա Ավետիսյանը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Առաջարկել Սիսիան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությունը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին՝ դրանք օրենքով սահմանված կարգով հաստատելու համար:
3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նախկին Սիսիան և Գորայք համայնքների միավորմամբ և վերակազմակերպմամբ, ինչպես նաև աշխատանքների ծավալի ավելացմամբ: ՏԻՄ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն աշխատակազմի յուրաքանչյուր աշխատակցի պաշտոնային դրույքաչափը չի կարող գերազանցել համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի 81.26%: Որոշման նախագծով պահպանվել է նշված համամասնությունը: Աշխատավարձի ֆոնդը պաշտոնային դրույքաչափերի հաշվարկով տարեկան կտրվածքով կկազմի 337436196 ՀՀ դրամ:

Ջիվան Մարգարյանը հարցրեց, արդյո՞ք հայեցողական պաշտոնները կարող են չլինել, թե պարտադիր են:

Համայնքի ղեկավարը պատասխանեց կարող են չլինեն, եթե կարիքը կա պարտադիր են:

Ջիվան Մարգարյան – Քանի՞ հաստիք է ավելացել նախորդի համեմատ և որ պաշտոնները, և կարիք կա այդքան պաշտոններ ունենալ:

Համայնքի ղեկավար – Իհարկե, կարիք կա:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ – Հավելված 2-ում նշված է 182 հաստիք, նախկինում եղել է 154 հաստիք: Գորայքի համայնքապետարանի հաստիքացուցակով ունեցել են 38 աշխատակից: Առանձին ստորաբաժանում ենք ձևավորել «Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին» և ունեցել ենք 1 աշխատակից:

Աննա Ավետիսյան – Ըստ ներկայացրած նախագծերի 165781մլն ՀՀ դրամով ավելանալու է աշխատավարձի ֆոնդը: Բյուջեի եկամուտները ինչքանո՞վ է ավելանալու: Իսկ Լիդիանից եկած եկամուտները ինչպես են արտահայտվում:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ – Բյուջեի հարցի քննարկման ժամանակ բյուջեին վերաբերող հարցերին մանրամասն կպատասխանենք: Եկամուտները ավելանալու են այնքանով ինչքան կազմել են Գորայքի թվերը: Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետը հստակ կպատասխանի:

Կորյուն Մուրադյան – 170մլն. ՀՀ դրամի չափով ավելացել է:

Աննա Ավետիսյան – Ինչքանով ավելացել է, այնքան էլ ուղղվել է աշխատավարձի ֆոնդին: Հանքաարդյունաբերությունը, որը համայնքին իր դրական կողմերից բացի գիտենք ինչ վնասներ կարող է հասցնել, առաջակում եմ այդ գումարները ուղղել կապիտալ ծախսերի վրա:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ – Շատ լավ առաջարկ ներկայացրեցիք, Լիդիանի գանձված միջոցները կուղղենք կապիտալ ծրագրերին:

Հրաչյա Դանիելյան – Աշխատավարձերի բարձրացումը կապված է նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

Հարցի քննարկման ժամանակ ներկայացավ ավագանու անդամ Աշոտ Աղաջանյանը և մասնակցեց քվեարկությանը:

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ Ավագ Ասատրյանը և Աննա Ավետիսյանը:

Կողմ-11 Դեմ-5 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՎԱԳ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Կարապետյանը _____